ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/02

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Սքայ Մոթորս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, ոստիկանական մեքենաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21625-2021 գրությամբ «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 24.12.2021թ. թիվ 3/27/89461-21 գրության հիման վրա, 03.01.2022թ.-ին «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 03.01.2022թ.-ին:

04.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/02 համարի ծածկագիրը:

13.01.2022թ.-ին և 02.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.02.2022թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 24.12.2021թ. թիվ 3/27/89461-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար 17.11.2021թ. հայտարարված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-13 ծածկագրով ոստիկանական մեքենաների ձեռքբերման գնման ընթացակարգի արդյունքում հայտ է ներկայացրել «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ն: Վերջինս 1-ին չափաբաժնով համարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվել է գործընթացի հետագա մասնակցությունից /դիմումը կցվում է/, իսկ 2-րդ չափաբաժնով «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է տեխնիկական բնութագրի անհամապատասխանության պատճառով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք Ձեզ ձեռնարկել միջոցներ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է ՀՀ ոստիկանություն-ի վերանորոգման

աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ ընթացակարգի մասնակից՝ «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Սքայ Մոթորս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.01.2022թ.-ին գրությամբ դիմել է «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21625-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2022/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության կողմից ոստիկանական մեքենաների ձեռքբերման նպատակով 17.11.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Աճուրդ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ն:

iii. «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.12.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ է ճանաչվել «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ն:

v. Հանձնաժողովի 23.12.2021թ.-ին կայացված նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 23.12.2021 թվականին «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ի տնօրեն Մարգարյանից ստացվել է դիմում, որով վերջինս հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից: Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգը համարել չկայացած:

vi. «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ն 23.12.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ հրաժարվում է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-13» ծածկագրով մրցույթի հետագա մասնակցությունից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21625-2021 գրությամբ «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից ոստիկանական մեքենաների ձեռքբերման նպատակով 17.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրությամբ «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն 23.12.2021 թվականին «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ի կողմից ստացվել է դիմում, որով վերջինս հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ն, Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո հրաժարվելով «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-13» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի

ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21625-2021 գրությամբ «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-LO-2022/02 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սքայ Մոթորս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**